ԴԱՐՁԳԻՐԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅԵԼԱՅՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ ԼԵԶՎԻ ԵՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

ԳՐԻԳՈՐ ՂԱԶԱՐՅԱՆ

Նշանային համակարգերում հայելային կառույցների (*իտ.*՝ strutture a specchio, *անգլ.*՝ specular structures) քննությունն անխուսափելիորեն կապված է համաչափության և անհամաչափության, իրականությունների և դրանց բաժանարար առանցքի, նշանի կրկնելիության խնդիրների հետ: Լեզվաբանության և նշանագիտության բնագավառներում տվյալ ոլորտին են պատկանում լեզվական նշանային համակարգերի ներակա հնարավորությունների, անհատի ինքնության ընկալման, իրականությունների սահմանազատման և երկանդամ հակադրությունների հարցերը, որոնք արտահայտության պլանում որոշակիորեն հարում են ծածկագիտության և թաքնագիտության ոլորտներին:

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել, բնութագրել և դասակարգել լեզվի և երաժշտության նշանային համակարգերում հանդիպող հայելային կառույցները՝ մասնավորապես դարձգիրը (պալինդրոմ)՝ առաջադրելով խնդրո առարկա միավորների մեկ ընդհանուր դասակարգում: Այս նպատակով որպես մեկնակետ կվերցնենք հայելային երևույթների՝ մասնավորապես մշակութաբանության, երևութաբանության և նշանագիտության բնագավառներում տեղ գտած ուսումնասիրությունները[1]:

Հայելային միավորները լեզվում (օրինակ՝ անգլերեն «BOB» անունը հորիզոնական և ուղղաձիգ կտրվածքներում, հայերեն «Սոս» անունը, «God is light, light is God» կամ «Նա քեզ է սիրում, սիրում է քեզ նա» կառուցվածքային տիպի նախադասությունները հորիզոնական կտրվածքում և այլն) ընթերցման երկու և ավելի հնարավորությունների շնորհիվ անուղղակիորեն խորհրդանշում են միավորի երկակիությունը, ոչ միանշանակ բնույթը, որը հաճախ տրամաբանորեն աղերսվում է երկանդամ հակադրությունների հետ՝ լինել – չլինել, ճշմարիտ – ոչ ճշմարիտ, իրական – անիրական և այլն: Հայելու և հայելայնության նշանագիտական ուսումնասիրությունները, որոնց կենտրոնում իրականության և իրական «ազդակների կրկնօրինակման»[2] դիտարկումն է

[1] Տե՛ս, օրինակ, **Tagliapietra A.**, La metafora dello specchio, Milano: Feltrinelli 1991, **Eco U.**, Sugli specchi e altri saggi, Milano: Bompiani 1985, **Melchior-Bonnet S.**, Histoire du miroir, Paris: Imago, 1994; «Зеркало. Семиотика зеркальности» [Ред. З. Г. Минц]. Тарту : ТГУ, 1988, և այլն:

[2] **Eco U.,** Semiotics and the Philosophy of Language, Bloomington: Indiana University Press, 1986, p. 210.

որպես նշանային երևույթ, արժեքավոր են նաև լեզվական նշանային համակարգերում հայելային կառույցները մեկնաբանելու առումով:

Լեզվի հայելային կառույցների շարքում մասնավորապես հիշատակելի են *դյուրադարձուկները* (պալինդրոմ), որոնք հաճախ նշվում են նաև *դարձգիր* եզրույթով: Ընդ որում, փիլիսոփայական հայեցակետից դրանց տրամաբանությունը աղերսվում է մի ուրույն դիալեկտիկական, հարաբերական գաղափարի հետ, այն է՝ որևէ երևույթի երկու՝ միմյանց հակադիր իրացումները կարող են միևնույն արդյունքին հանգեցնել, այսինքն՝ երկու դեպքերում էլ մեկնության (interpretanta-ի՝ մեկնաբանելիի) մակարդակում ստանում ենք նույն արդյունքը: Այս խնդիրն, ըստ էության, փիլիսոփայական-գոյաբանական բազմաթիվ խորհրդածությունների տեղիք է տալիս, զուգորդվելով նաև ֆատալիստական գաղափարների հետ. արդյոք հակոտնյա երևույթները, ինչպես, օրինակ, «լինելն» ու «չլինելը» կարո՞ղ են միևնույն արդյունքին հանգեցնել, ինչպես դյուրադարձուկի՝ միմյանց հակադիր ընթերցումները:

Դարձգիրը կամ *դյուրադարձուկը*, որպես լեզվի մեջ շրջելիության գաղափարի ներմարմնավորում, հայերենում իր բացատրությունն է գտնում նույնիսկ երևույթի անվանման ստուգաբանությամբ: Շրջելիության և փոփոխելիության գաղափարի շնորհիվ այն մեկնաբանվել է նաև որպես «հեղափոխության քրոնոտոպ»[3]: Այս համատեքստում հիշատակելի են սկզբի և վերջի միաձուլման, դառնալիության և կրկնելիության խորհրդանիշները, ինչպես գնոստիկական *Ուրոբորոս օձը,* որն ուտում է սեփական պոչը, *խեցգետինը*, որից առաջացել է «խեցգետնաքայլ» կանոնի ձևակերպումը երաժշտագիտության մեջ և այլն:

Միևնույն ժամանակ դարձգրի տրամաբանության մեջ առկա է *կրկնելիության* գաղափարը, ասել է թե՝ մեկ այլ ընթերցմամբ նույն իմաստի վերարտադրման կամ նոր իմաստի փոխանցման, ուստի նաև՝ ուսումնառության հիմքը: Կրկնությունը, որը, ըստ հանրահայտ ասույթի, «գիտության մայրն է», որոշակիորեն առնչվում է նաև հայելային նեյրոնների հետ, որոնց գործառույթը, ըստ որոշ ուսումնասիրությունների, հնարավոր է դարձնում լեզվի միջոցով աշխարհճանաչողությունը, ինչպես նաև փոփոխությունն ու առաջընթացը[4]: Լեզվաբանության մեջ կրկնութ-

---

[3] Գրեբերը «քրոնոտոպ» եզրույթը կիրառում է ժամանակի և տարածության օրինաչափ փոխներգործության և միասնական արտահայտության իմաստով: Նկատենք, որ ռոմանագերմանական և սլավոնական մի շարք լեզուներում «հեղափոխություն» բառը կազմված է *դարձ-*, *ետ-* իմաստակիր նախածանցով. օրինակ՝ անգլերենում՝ «REVO-lution». **Greber E.**, A Chronotope of Revolution: The Palindrome from the Perspective of Cultural Semiotics // The Palindromist 6, 1998 http://www.realchange.org/pal/semiotic.htm

[4] Այսպես կոչված «հայելային նեյրոնների» ժամանակակից ուսումնասիրություններում նմանակման մեխանիզմների ակտիվացումը կապվում է լեզվի ընկալման, ուսումնառության կարողությունների, մտքի տեսության և հաղորդակցության զարգացման հետ (տե՛ս **Corballis M. C.**, Mirror neurons and the evolution of language // Brain & Language 112 (2010), էջ 25–35, www.elsevier.com; **Horoufchin H., et al.**, Action and object words are differentially anchored in the sensory motor system - A perspective on cognitive embodiment, Sci Rep. 2018, https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC5919964/):

յունը, ասել է թե՝ իրականության կրկնապատկումը, սերտորեն կապվում է նմանակման մեխանիզմների հետ, որոնց վերագրվում է ճանաչողական գործընթացներում նշանների ստեղծման առանցքային գործառույթը[5]:

Երկկողմ ընթերցման հնարավորությունն ինքնին որոշակի ընթացքի և վերադարձի տրամաբանություն է պարունակում, ինչն էլ զուգորդվում է հավերժական շարժման հետ: Այս առումով դարձգիրը բնորոշվել է նաև որպես «հավերժական շարժիչի վաղեմի խորհրդանիշ, ինքն իրեն վերարտադրող և ինքնահոս ուժ»[6]:

Ավանդաբար դարձգիր ստեղծողներին վերագրում էին երգիծաբանի, կյանքի լավն ու վատը շրջող, բարին ու չարը, ընդունելին և անընդունելին միախառնող, դրանք հաճախ տեղերով փոխող անհատի կերպար: Միևնույն ժամանակ դարձգիրն ընկալվում էր «աստվածային կարգին հակադրվողի» իմաստով, քանի որ այն ներկայացնում էր «իրականաճշմարիտի» հակադարձված պատկերը: Եթե հայելու մեջ մարդու աջը երևում է որպես ձախ, իսկ ձախը՝ որպես աջ, ապա նմանապես և դարձգրի միջոցով իրականությունը ներկայանում է հորիզոնական շրջվածքով («vertical flip»): Հորիզոնականությունը պահպանվում է նաև գրի՝ շարույթի գծային կառուցվածքում, որտեղ գործ ունենք շրջվածքի հետ, սակայն հայելայնության երևույթը դիտարկվում է թե՛ հորիզոնական, թե՛ ուղղաձիգ չափումներում: Այստեղ բնականաբար ծագում է **առանցքի** խնդիրը, որին կանդրադառնանք ստորև, սակայն, որպես մեկնակետ, նշենք, որ դարձգրերը հիմնավորապես սիմետրիկ՝ համաչափ կառույցներ են և հակադրվում են «իմաստաստեղծ կառույցներին», որոնց բնորոշ է անհամաչափությունը[7]: Այդ անհամաչափությունը կապված է նախ և առաջ «աջ» և «ձախ» հասկացությունների վերաբերյալ մարդկանց ընկալումների հետ, որոնցից սովորույթի ուժով բխեցվում են մարմնի համապատասխան մասերի և ուղղությունների վերաբերյալ հանրամշակութային, խմբամշակութային և մենամշակութային մակարդակի գնահատականներ: Այսպես օրինակ՝ աջը զուգորդվում է բարու, ճշմարիտի և արդարի, իսկ ձախը՝ չարի, սխալականի և անարդարի հետ:

«Աստվածայինին հակադրվողի» գաղափարն առանձնապես ակներև է երաժշտական տեքստերում հանդիպող ***թաքնագրության***՝ այսպես կոչված backmasking-ի դեպքերում, երբ ձայնագրության հետադարձ նվագարկման ժամանակ հնչյունային մակարդակում երևակվում են կասկածելի, թաքնված տեղեկույթներ[8]: Ավելին, բանավոր ընթերցմամբ ստացված արդյունքը հաճախ որևէ կապ չի ունենում գրի մա-

---

[5] Տե՛ս **Соссюр Ф. де.** Заметки по общей лингвистике. М.; Прогресс, 1990, էջ 157:

[6] **Greber E. A.,** A Chronotope of Revolution: The Palindrome from the Perspective of Cultural Semiotics // The Palindromist 6, 1998, http://www.realchange.org/pal/semiotic.htm

[7] Տե՛ս **Lotman Y. M.**, Universe of the Mind: A Semiotic Theory of Culture, New York: Tauris & Co, 2001 էջ 78:

[8] Այսպես կոչված "phonetic reversal", "backmasked messages" երևույթները, սակայն, դուրս են սույն ուսումնասիրության ուղեծրից:

կարդակի հետ, քանի որ գաղտնագրության խնդրո առարկա դեպքերում երգվող/արտասանվող տեքստն ինքնին դարձգիր չէ: Այնուամենայնիվ, դժվար է հերքել դարձգրի և լեզվի գրային համակարգում ընդունված ուղղությանը հակառակ գրելու/կարդալու միջև հավանական փոխառնչությունը:

Ճանաչողական նյարդաբանության և հոգեբանության մեջ օբյեկտիվ իրականության և երևույթների հակադարձ ընկալումները կապվում են նաև *ձախագրության* (անգլերեն՝ «levography» կամ «sinistrad writing») երևույթի հետ: Իրականության յուրաքանչյուր առարկա կամ բառ ճանաչելիս ուղեղի դոմինանտ կիսագնդում պահպանվում է համապատասխան պատկերը, իսկ ոչ դոմինանտում՝ դրա արտապատկերումը, ինչը ենթադրում է, որ, օրինակ, ձախլիկներն այս կամ այն պատճառով աջ ձեռքով գրելիս միևնույնն է պահպանում են ձախով գրելու չօգտագործված ներուժն ու կարողությունը[9]: Ասվածը թույլ է տալիս ենթադրել, որ գրի մակարդակում նշանների դեպի աջ և դեպի ձախ դասավորությունը հավասարապես հնարավոր, բնական և ակնկալելի երևույթ է՝ չնայած այն հանգամանքին, որ ձախ ձեռքը, դրա գործածությունն ու ձախլիկ լինելն առհասարակ կրոնական և հասարակական պատկերացումներում դարեր շարունակ զուգորդվել են սխալի, չարիքի, բնածին արատի, նույնիսկ լուրջ հիվանդությունների և այլևայլ շեղումների հետ[10]:

Այնուամենայնիվ, կրոնական արմատներ ունեցող վերոհիշյալ պատկերացումներն ու կանխակալ կարծիքները գերիշխող էին մինչև անցյալ դարի 50-ական թվականները[11]: Հայելու, հայելայնության, ձախի և աջի հարաբերականության ու հավասարության փոխառնչություններն այնքան սերտ են, որ ասվածը հիմնավորելու համար բավական է հիշատակել համաշխարհային ճանաչում ունեցող այնպիսի ձախլիկների, ինչպիսիք են Լեոնարդո դա Վինչին՝ իր հայտնի «*scrittura a specchio*» հայելագիր գրառումներով և մարդկային մարմնի համաչափության խորհրդանիշ դարձած «Վիտրուվյան մարդ» ստեղծագործությամբ, Լյուիս Քերոլը՝ իր հայտնի «Ալիսը հայելու աշխարհում» ստեղծագործությամբ, և այլն[12]:

Լեզվում հայելային կառույցների ուսումնասիրության մեջ համաչափության խնդիրը դիտարկվում է նշանային համակարգի տառնշանների մակարդակից սկսած: Այսպես, կարելի է առանձնացնել հորիզոնական, ուղղաձիգ, ինչպես նաև միաժամանակ երկու առանցքներում հայելային բնույթ ունեցող նիշեր: Դիտարկենք մի քանի օրինակ:

---

[9] Տե՛ս **McIntosh R. D., Della Sala S.,** Mirror-writing, The Psychologist. Vol. 25, 2012, էջ 742-747: https://thepsychologist.bps.org.uk/volume-25/edition-10/mirror-writing

[10] Տե՛ս **Бертран П.-М.** Зеркальные люди. История левшей. М., 2016, էջ 73-106:

[11] Տե՛ս նույն տեղը, էջ 7:

[12] Տե՛ս նույն տեղը, էջ 226-229:

Հայելային նիշեր	Հայերենի նշանային համակարգ	Լատիներենի նշանային համակարգ
Հորիզոնական առանցքում	Ճ, Ո, Ս	A, M, T, U, V, W, Y
Ուղղաձիգ առանցքում	Հ, Յ	B, C, D, E, K
Երկու առանցքներում	Փ, Օ	H, I, O, X

Այս նիշերը և դրանց հայելայնության սկզբունքով կազմվող միավորները կոչվում են ամբիգրամներ, այն է՝ հորիզոնական կամ ուղղաձիգ հայելու մեջ նույն կերպ ընթերցվող միավորներ[13]: Ընդ որում, ամբիգրամներ առկա են նաև թվանիշերով կազմված կապակցություններում[14]:

Դարձգիրը սահմանելիս (*հուն.* պալինդրոմ՝ πάλιν – palin՝ «ետ, նորից» և δρόμος – dromos՝ «վազք») անհրաժեշտ է հաշվի առնել դրա արտահայտության և դրսևորման ձևերը ամենատարբեր նշանային համակարգերում և գիտակարգերում՝ լեզվից մինչև երաժշտություն, մաթեմատիկայից մինչև կիբերնետիկա և այլն: Խնդրո առարկա հնարը սովորաբար սահմանվում է որպես թվերի, տառերի կամ նշանային այլ համակարգի միավորներից ստեղծված շարույթ, որի թե՛ ձախից աջ, թե՛ աջից ձախ ընթեցումը միևնույն արտահայտությանն ու իմաստային միևնույն արժեքին է հանգում: Օրինակ՝ «քաղաք» բառը, «Մենակ կատակ կանեմ» նախադասությունը, մեկ թվանիշով ստացված թվերի քառակուսիները ($1^2=1$, $11^2=121$, $111^2=12321$) և այլն:

Հայտնի է, որ ի տարբերություն դարձգրի՝ *գրաշրջումը* կամ նույնտառիկը (*հուն.* անագրամմա՝ ἀνά – aná՝ «վեր-», «նորից» և γράμμα – grámma՝ «տառ») բառի տառերի վերադասավորությամբ կազմված մեկ այլ բառ է, օրինակ՝ առած – ծառա, արթուն – Թուրան, անուշ – աշուն և այլն: Հայերենում գրաշրջման եղանակով նոր իմաստ ստանալու երևույթի բացառություններից է, օրինակ, «նավ-վան» զույգը, որտեղ «վան»-ը կրում է նաև «տապան»՝ այսինքն, ըստ էության նույն «նավ» իմաստը (հոգնակին՝ վանք)[15]:

Որպես լեզվական միավորների հիշողությունը ներմարմնավորող հնար՝ դարձգիրը հայտնի է եղել դեռևս անհիշելի ժամանակներից: Դրա զարգացումը պայմանավորված էր գրի համակարգի տարածմամբ, երբ սկսվեցին ասելիքի խտացման և ծածկագրման փորձերը, և դարձգիրը սկսեց օգտագործվել առհասարակ որպես բառախաղային հնարք և մասնավորապես պոեզիայում՝ որպես խոսքին միստիկ-գերբնական երանգներ հաղորդելու միջոց: Դարձգրի առաջին կոդավորումները վերագրվում

[13] Տե՛ս **Sorensen R.A.**, A Plenum of Palindromes for Lewis Carroll // Mind, New Series, Vol. 109, Oxford University Press, 2000, էջ 17-20:

[14] Տե՛ս **Strobogrammatic numbers**: the same upside down // The On-Line Encyclopedia of Integer Sequences, https://oeis.org/A000787:

[15] Տե՛ս **Վ. Ուրիշեան**, Մեր արմատները նոր լոյսի տակ, Fresno: Meshag Printing & Publishing, 1998, էջ 198:

են հելլենական դարաշրջանի պոետ, երգիծաբան Սոտադեսին (մ. թ. ա. 3-րդ դար) և բնույթով մետրիկ՝ տաղաչափական դյուրադարձուկներ էին, որոնք հետագայում կոչվեցին *սոտադյան*: Դրանցում իմաստը վերակառուցվում էր երկար և կարճ շեշտերի հաջորդականության շնորհիվ:

Տառացի դարձգրերը (*իտալ.* ՝ palindromi letterali), որոնց հակադարձ ընթերցումը կատարվում է տառ առ տառ, ի հայտ են եկել միջնադարում և համարվում էին գերբնական երևույթ: Դրանց ծագումը շատերի, այդ թվում նաև՝ 5-րդ դարի բուրգունդացի եպիսկոպոս սբ. Սիդոնիուս Ապոլլինարիսի կողմից վերագրվում էր անդրաշխարհիկ, դիվային ուժերին: Այս առումով պատահական չէ, որ դարձգրերը հանդիպում են հիմնականում երկու տարածքների սահմանազատման կամ երկու աշխարհների սահմանագիծը խորհրդանշող վայրերում՝ դարպասների և գերեզմանոցների արձանագրություններում: Այդ սահմանները, որտեղ երկրային ուժերը դուրս են գալիս անդրշիրիմյան՝ դժոխային ուժերի դեմ, համարվում են նաև «ուժգնացված նշանային գործառության» կետեր[16]:

Հատկանշական է, որ սահմանի թեման զուգահեռաբար հանդիպում է առասպելաբանության և նշանագիտության բնագավառի ուսումնասիրություններում՝ հայելու մասին վերլուծություններում: Հայելին բնորոշվում է որպես սահման տարբեր աշխարհների, ինչպես նաև տարբեր ժամանակակետերի միջև: Հայելային արտացոլքի ուղղաձիգության և հորիզոնականության մասին առասպելաբանության և ազգագրության մեջ հիշատակվում է, օրինակ, առասպելական «Երկնային հայելու» գերբնական հատկությունների համատեքստում: Երկնային հայելուն հեքիաթներում և առասպելներում վերագրվում է անցյալը, ներկան և ապագան մեկտեղելու, մարդու համար դրանք բացահայտելու կարողություն[17]:

Որպես հաղորդակցման նշանային համակարգերում հայելու և հայելայնության դրսևորում՝ *դարձգիրը* կրում է հայելու նշանային գործառույթները: Դարձգրերին, ինչպես հայելիներին, հատուկ նշանակություն է վերագրվում հենց երկկողմանի ընթերցման հնարավորության առեղծվածի շնորհիվ: Շարակարգային մակարդակում ընթերցման և ընթերցման միջոցով ժամանակի երկկողմանի ուղղվածություն ենթադրելով՝ դարձգրերը համարվում են ժամանակն ու տարածությունը շրջող, հետևաբար նաև ժամանակը գերազանցող հնարներ[18]: Այդ իսկ պատճառով դրանք մեծ տարածում ունեին հմայչագործությունների լեզվում և

---

[16] Տե՛ս **Lotman Y. M.**, Universe of the Mind: A Semiotic Theory of Culture, New York: Tauris & Co, 2001, էջ 79:

[17] Տե՛ս **Кусаева З. К.** Семиотика зеркала в фольклорно-этнографической традиции осетин // Bulletin of the Kalmyk Institute of Humanities of the Russian Academy of Sciences. Vol. 25, Is. 3, 2016, էջ 64-66:

[18] Տե՛ս **Смирнов И. П.** Художественный смысл и эволюция поэтических систем. М.: Наука, 1977, էջ 125:

հաճախ կոչվում էին նաև «voces mysticae» կամ «voces magicae»[19]: Կարծիք կա, որ եթե աջից ձախ ընթերցելն ակտիվացնում է ուղեղի կիսագնդերի ֆունկցիոնալ անհամաչափության (ասիմետրիայի) մեխանիզմները, ապա մշակութային բարձրագույն մակարդակներում հետադարձ ընթերցումը զուգորդվում է առերևույթի և քողարկվածի, հասարակ-աշխարհիկի և սուրբ-էզոթերիկի միջև հակադրության հետ[20]:

Դարձգրերի տեսակները սահմանազատելու և դասակարգելու անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ մեկ դարձգրի մեջ հնարավոր է տեսնել մի քանի հնարների համադրում, ինչը նաև տերմինաբանական շփոթմունքի տեղիք է տալիս: Օրինակ՝ մեր թվարկության առաջին դարում գրված «կախարդական քառակուսու» (Sator Arepo Tenet Opera Rotas) մեջ մեկտեղված են սովորական դարձգրի (պալինդրոմ), գրաշրջման (անագրամա) և աքրոստիքոսի հնարները: Մյուս կողմից՝ դրանում հավասարապես համադրված են ընթերցման ոչ թե երկու, այլ չորս ուղղություններ: «SATOR» քառակուսին հանդիպում է հին անգլիական ձեռագրերում՝ որպես կախարդական պաշտպանիչ բանաձև, և հատկանշական է, որ դրա տառերի վերադասավորության՝ գրաշրջման միջոցով ստանում ենք տերունական աղոթքի սկիզբը՝ Pater Noster[21]: Այս փաստից ելնելով՝ արևմուտքի բազմաթիվ երկրներում քառակուսին կիրառվում էր որպես չար ուժերից պաշտպանվելու, Աստծո հովանին և հաջողությունը խնդրելու միջոց, սակայն դրա քրիստոնեական ծագման վերաբերյալ կոնկրետ փաստերին առայժմ փոխարինում են լեզվաբանական-թաքնագիտական տեսությունները[22]:

Լեզվաբանության և երաժշտագիտության մեջ դարձգրային երևույթները անվանվում և դասակարգվում են տարբեր եզրույթների ներքո: Այնուամենայնիվ, գտնում ենք, որ առնվազն վերոհիշյալ երկու նշանային համակարգերի համար հնարավոր է կիրառել ստորև առաջարկվող պարզ դասակարգումը: Նախ և առաջ անհրաժեշտ է հստակ սահմանազատել դարձգիրը (պալինդրոմ) և գրաշրջումը (անագրամա), ապա առանձին սահմանել երրորդ տեսակը, որը, ինչպես ստորև կփորձենք հիմնավորել, չի կարող պարզապես դարձգիր կոչվել:

I. Դարձգիրը նշանային համակարգի նիշերից կազմվող իմաստակիր միավոր է, որը երկու կողմից ընթերցվելիս հանգեցնում է ***նույնարժեք*** արդյունքի: Հակադարձ շարադրելիս և ընթերցելիս իմաստը պահպանվում է, երբեմն՝ բառակազմական-ձևաբանական միավորների վերախմբավորման միջոցով: Դարձգրի այս տեսակի առանձնահատկությունն այն է, որ միավորի առանցքը մեջտեղում է, ընդ որում, երաժշտա-

[19] Տե՛ս **Blake B. J.**, Secret Language, Oxford: Oxford University Press, 2010, էջ 16:

[20] Տե՛ս **Lotman Y. M.**, Universe of the Mind: A Semiotic Theory of Culture, New York: Tauris & Co, 2001, էջ 79-80:

[21] Տե՛ս **Ивлева М. А.** Вторичное кодирование в древнеанглийском языке (на примере поэтических текстов VII–XII вв.). Автореф. дисс. … канд. филол. наук. Барнаул, 2012:

[22] Տե՛ս **Blake B. J.**, Secret Language, Oxford: Oxford University Press, 2010, էջ 28-30:

կան ձևի մեջ այն ձգտում է մի կետի, որից շարունակվող հակադարձ շարժմամբ և հնչյունների վերադասավորությամբ ստանում ենք *կամարի*[23] պատկեր:

Լեզվական դարձգիրը երկու անձի կողմից (միաժամանակ աջից ձախ և ձախից աջ) ընթերցվելու դեպքում չի խաթարի շարույթի տաղաչափական և իմաստային կառուցվածքը. նմանապես և երաժշտական դարձգրի երկկողմանի համընթաց կատարումը չի խաթարի «երաժշտական շարույթի» ներդաշնակ հնչողությունը և միասնական ռիթմիկ ընթացքը:



Երաժշտագիտական գրականության մեջ տվյալ հնարը հաճախ քննարկվում է «*խեցգետնաքայլ իմիտացիա*» կամ «*հայելանման դասավորություն*» ձևակերպումների ներքո[24]:

Դարձգիրը, անկախ իր երկարությունից, սովորաբար կառուցված է լինում մեկ կենտրոնի շուրջ, և երկու կողմերից կրճատվելիս պահպանվում է համաչափությունը, ուստի և պատկեր-նշանի մակարդակում այն բնական է ներկայացնել *հավասարասրուն եռանկյունու* կամ *կամարի* տեսքով[25]: Այս տեսակի կառույցները կարելի է ներկայացնել նաև 12321 թվային խորհրդանիշով, որը կրկնում է կամարի տրամաբանությունը, ընդ որում՝ 3-ը համընկնում է առանցքի հետ: Դարձգրային շարույթի 12321 տիպի կառուցվածք հանդիպում է, օրինակ, ավստրիացի կոմպոզիտոր Ալբան Բերգի (1885-1935) «Լուլու» սյուիտի մեջ: Դարձգրի առանցքում հնչում է *ռե բեմոլ մաժորի* եռահնչյունի վրա կառուցված բարդ համադրված ակորդ (արարված II, թիվ 685, տակտ № 3) [Alban Berg, Lulu, Universal Edition A. G., 1985, Wien, p. 512]:

Թե՛ լեզվի, թե՛ երաժշտության մեջ այս տիպի դարձգիրը երկու ուղղություններով ընթերցելիս սկզբնական ձևը և իմաստը ամբողջովին

---

[23] Երաժշտագիտական գրականության մեջ նշվում է, որ կամարի ֆիգուրը կառուցվում է «երաժշտական շարույթի» միավորների A-B-C-B-A դասավորությամբ: Տե՛ս **Chouiniere Ch.**, Palindromes in Music: Definition & Examples, https://study.com/academy/lesson/palindromes-in-music-definition-examples.html

[24] Տե՛ս **Riley M.** The Viennese Minor-Key Symphony in the Age of Haydn and Mozart, New York: Oxford University Press, 2014, էջ 106-108:

[25] Տե՛ս **Blake B. J.**, Secret Language, Oxford: Oxford University Press, 2010, էջ 16-17:

պահպանվում է: Հետադարձ ընթերցման միջոցով մտքի վերակառուցման ժամանակ պահպանվում է շարույթի կառուցվածքը՝ ի դեմս այն կազմող միավորների հետադարձ հերթական վերադասավորության:

II. Կիսադարձգիր կամ գրաշրջում (անագրամա): Այս տիպի միավորը երկու կողմերից ընթերցելիս ստանում ենք տարբեր, միմյանցից անկախ, սակայն իմաստային առումով հավասարապես ամբողջական արժեքներ, որոնց գումարը մաքուր՝ նույնանիշ դարձգիր է: Ըստ էության *գրաշրջում* կարելի է կոչել թե՛ միավորի նիշերի խառը վերադասավորությամբ կազմված մեկ այլ միավորը (օրինակ՝ «աստ-տաս»), թե՛ նիշերի անփոփոխության պայմաններում հակառակ ընթերցմամբ ստացված միավորը (օրինակ՝ «դրամ-մարդ»): Ըստ Մաքսի Բրուքի՝ առաջին դեպքում, եթե գրաշրջմամբ ստացված բառազույգի ներսում առկա է իմաստային կապ, ապա գործ ունենք անագրամայի հետ, իսկ եթե տառերի խառը վերադասավորությամբ ստացվում է բոլորովին այլ բառ, ապա գործ ունենք «փոխադրման» կամ «փոխատեղման» (“transposal”) հետ[26]: Այնուամենայնիվ, նմանատիպ բառազույգերը տարբերակելու համար Մարտին Գարդների կողմից 1961 թվականին «պալինդրոմ» բառի շրջվածքով ստեղծվեց գրաշրջման՝ վերը նշված երկրորդ տեսակը բնութագրող «semordnilap» եզրույթը[27], որի հետ, ըստ որոշ աղբյուրների, զուգահեռաբար կիրառելի են նաև «շրջելի անագրամա» (reversible anagram, reversal), «կիսադարձգիր» (half-palindrome, semi-palindrome) և այլ եզրույթներ[28]: Մենք ավելի նպատակահարմար ենք գտնում կիրառել ***կիսադարձգիր*** ձևը, քանի որ այն բնութագրում է անփոփոխ շրջվածքով միավորը՝ ակնարկելով նաև դրա կիսատ, անավարտ լինելը, ի տարբերություն ամբողջական դարձգրի, որի դեպքում միավորը ենթադրում է որոշակի շարույթի առկայություն: Կիսադարձգրի մեջ համաչափության առանցքը գտնվում է միավորի *ընթերցման ուղղության վերջնակետում*: Այսպես օրինակ, լեզվի մեջ «ծարավ» բառը բնականորեն՝ ձախից աջ ընթերցելու պարագայում կիսադարձգրի առանցքը միավորի աջ կողմում է:

Ըստ էության, կիսադարձգիրը բառային կամ միկրոշարահյուսական միավոր է, որի շրջվածքը նիշերի վերադասավորություն է ենթադրում և անխուսափելիորեն կապված է միավորի իմաստային փոփոխության հետ: Թվային արտահայտությամբ կիսադարձգրի խորհրդանիշ կարելի է համարել, օրինակ, «123» կայուն միավորը, որը հետադարձ ընթերցելիս «արժեքային»՝ իմաստային առումով անկախ, լիարժեք իմաստակիր միավոր ենք ստանում («321»): Ինչպես լեզվի, այնպես էլ երաժշտության մեջ կիսադարձգիրը ենթադրում է հետ-

---

[26] Տե՛ս **Brooke M.**, Anagrams and Transposals: A glossary. Sweeny, Texas 1979, էջ 160:

[27] Նույն տեղը, էջ 18:

[28] Տե՛ս, օրինակ, https://theweek.com/articles/464433/palindromes-anagrams-9-other-names-alphabetical-antics:

ընթաց շարժում՝ վերջին նիշի կրկնությամբ, որը պատկեր-նշանների մակարդակում համապատասխանում է կիսակամարին։



Երաժշտության մեջ կիսադարձգիրը, որպես երաժշտական շարույթի բաղկացուցիչ մաս, պետք է փնտրել հորիզոնական առանցքում, այն է՝ սոլի կամ բասի բանալիում առանձին ընթացող *խեցգետնաքայլ շարժման* մեջ, մինչդեռ ուղղաձիգ առանցքում այն կարելի է գտնել *հայելանման իմիտացիայի* մեջ։ Տվյալ հնարը համեմատելի է նաև երաժշտական շրջելի կոնտրապունկտի տարրերի հետ։ Առավել տարածված է բոլոր ձայների վերադասավորմամբ կազմվող կոնտրապունկտը, որտեղ շարունակությունը կարծես սկզբի հայելային արտացոլքը լինի։ Այդ պարագայում պահպանվում է հավասարությունը սկզբնական և ածանցյալ քայլերի ինտերվալների միջև[29]։

III. Բացի վերոնշյալ երկու հնարներից, որոնց առնչությամբ ուսումնասիրություններ են արվել նաև հայագիտության բնագավառում[30], գոյություն ունի նաև դրանց մասնակի նմանությամբ (մասնակիորեն դարձգրի և գրաշրջման տրամաբանությամբ) կառուցվող նախադասության հազվագյուտ մի տեսակ, որը թեև սովորաբար դասվում է այսպես կոչված *երկդիմի դարձգրերի* (*իտ.՝* bifronte, *անգլ.՝* bifrontal palindrome) շարքին, սակայն վերոնշյալ սահմանումների լույսի ներքո, ինչպես նաև միավորի երկկողմանի ընթերցումների իմաստային փոխլրացման հանգամանքով պայմանավորված, ըստ էության, ո՛չ դարձգիր (պալինդրոմ), ո՛չ էլ կիսադարձգիր (գրաշրջում) համարվել չի կարող։

Դրանք այն նախադասություններն են, որոնց միջոցով արտահայտվող ասելիքը երկկողմ ընթերցման շնորհիվ փոխլրացվում է։ Այսինքն՝ հորիզոնական առանցքում նշված տիպի նախադասություններն ավարտուն միտք են ներկայացնում, սակայն դրանք սկզբից մի

---

[29] Տե՛ս «Музыкальный словарь Гроува», перевод с англ. Л. О. Акопяна, М.: Практика 2001, էջ 619; «Обратимый контрапункт» // Энциклопедия. Термины и понятия // https://www.belcanto.ru/obrkontr.html:

[30] Տե՛ս **Վ. Մարգսյան**, Հայերենը ափի մեջ. «9-րդ հրաշալիք» հրատ., Եր., 2005։ «Խնդուկ» և «խնդմնդուկ» բառերի մասին, «Ազգ» օրաթերթ, 15.08.2012 http://www.azg.am/AM/2100010533

ուղղությամբ, ապա հակառակն ընթերցելիս միավորի իմաստն ավելի ամբողջական է դառնում: Նախադասությունն իր մեջ համադրում է երկու տարբեր՝ իմաստային առումով միմյանց լրացնող շարույթներ՝ հակադարձ ծալվածքով: Նշված կառուցվածքը պարզաբանելու համար կարելի է պատկերացնել, որ երևակայական հայելին գտնվում է առաջին ընթերցման ուղղության վերջնակետում:

Ասվածի բացառիկ օրինակներից է լատիներեն «*In girum imus nocte*» նախադասությունը, որը լրացվում է հետադարձ ընթերցմամբ շարադրվող «*et consumimur igni*» բառերով: Վերջինս գրաշրջման տրամաբանությամբ կառուցվող շարույթ է, քանի որ չի կրկնում նախադասության առաջին հատվածի բառերից և ոչ մեկի իմաստը, այլ շարադրվում է դրանց տառերից՝ կետադրության և բացատների վերադասավորման միջոցով:

Դարձգրի այս ենթատեսակն առանձնահատուկ է նրանով, որ դրա հետադարձ ընթերցումը հանգեցնում է ձևաիմաստային առումով ոչ թե նույնարժեք միավորի (ինչպես օրինակ՝ «Մենակ կատակ կանեմ» դարձգիր-նախադասության պարագայում է), այլ առաջին ընթերցումից ստացված նախադասության շարունակությանը: Ընդ որում՝ վերջինս, ինչպես արդեն նշվեց, ստեղծվում է գրաշրջման (անագրամայի) սկզբունքով ինքնաբերաբար կազմված բառային միանգամայն նոր միավորների միջոցով:

Այս տեսակի դարձգիրը կազմության առումով հիմնվում է շրջվածքի վրա (обращение), այնուամենայնիվ՝ «շուրջ» արմատի օգտագործումը կարող է շփոթություն առաջացնել, քանի որ այն առկա է նախորդ տեսակի հոմանշային ձև համարվող՝ *գրաշրջում* եզրույթի մեջ: Երկու շարույթների ***համադրման երևույթը*** որպես տերմինաստեղծման մեկնակետ վերցնելու պարագայում, ձախից աջ և աջից ձախ ընթերցվող նախադասությունների համադրումը հաշվի անելով, տվյալ տեսակի նախադասությունները թերևս կարելի էր անվանել նաև *համադրագիր*, ինչը, սակայն, հղի կլիներ տարընմբռնումներով, քանի որ համադրման երևույթ առկա է նաև ընթերցման ընդամենը մեկ ուղղության մեջ, օրինակ՝ «Նունեն ունենա» և «Նունե, Նունեն ա»:

Էության, կառուցվածքի և արտահայտության առումով խնդրո առարկա տեսակի դարձգիրն ընթերցողի համար առաջին հայացքից անորոշ է և ոչ ակնհայտ, հետևաբար նպատակահարմար ենք գտնում այն անվանել ***թաքնադարձգիր***՝ ասվածի մեջ ենթադրելով հունարեն «կրիպտո» (kryptós) (թաքնված, գաղտնի) և «գրամա» (γράμμα) (գիր) արմատները:

Հայերենում որպես թաքնադարձգրի օրինակ կարելի է քննել «*Մեր է նա ուզել* <|> *լեզու անէրես*» նախադասությունը, որի իմաստն ընկալելի է դառնում, եթե «լեզու» բառն ընդունենք որպես փոխանունություն՝ «խոսող» կամ «մարդ» իմաստով: Մեկ այլ օրինակ է «*Ծարավել ենք նրա սիրո պես* <|> *սեպ, որի սարն քնել է վարած*» նախադասությունը: Ինչ-

պես այլ լեզուներում, հայերենում ևս թաքնադարձգրի երկրորդ մասը հաճախ խրթին ու արհեստական է հնչում: Վերը նշված երկրորդ օրինակում իմաստը միանշանակ հասկանալի չէ: Նախորդ մտքի հետ կապը կարող է ենթադրություն առաջացնել, թե խոսքը ինչ-որ չափով ծարավի մասին է: Նկատելի է նաև, որ հետադարձ ընթերցման ժամանակ ընթերցողի հայացքը իմաստի դուրսբերման համար որոշ անհրաժեշտ «հարմարեցումների» է դիմում[31]: Մասնավորապես, ծարավել բառի ե-ն ընթերցվում է որպես յոթերորդ «է», իսկ բաղաձայնից առաջ ոչ սովորական «-ն» մասնիկը շարութի բերումով ընկալվում որպես «սար» բառի որոշիչ հոդ: Ուստի, կարելի է ասել, որ դարձգիրը և հատկապես դրա այս երրորդ՝ թաքնված տեսակը ենթադրում է լեզվական միավորների տարրալուծում և նոր միավորների վերաձևավորում: Այնուամենայնիվ, ինչպես լատիներեն *In girum imus nocte* թաքնադարձգիրը, վերոնշյալ օրինակները ևս առաջին ուղղությամբ ընթերցվելիս արդեն ավարտուն միտք են արտահայտում:



Հարկ է նկատել, որ հայելային կառույցները և մասնավորապես դարձգրի խնդրո առարկա տեսակները գոյություն ունեն և կիրառվում են նաև երաժշտական տեքստերում՝ իրենց ուրույն արտահայտությունը գտնելով երաժշտական նշանային համակարգի միջոցով: Այս համատեքստում հավելենք, որ երաժշտության մեջ, ի տարբերություն լեզվական նշանային համակարգով ծավալվող բնականոն խոսքային հաղորդակցության, համադրությունը, այն է՝ երկու և ավելի ձայների համատեղ ընթերցման հնարավորությունը, թույլ է տալիս դարձգրի այս երրորդ տեսակի պարագայում շարույթը երկու ուղղություններով միաժամանակ ընթերցելու միջոցով ստանալ մեկ ներդաշնակ ամբողջություն: Այստեղից ծագում է նաև պատկերը հորիզոնական (մեկ հնգատողի) և ուղղաձիգ (երկու և ավելի հնգատողերի) առանցքներում դիտարկելու հնարավորությունը:

[31] Այս պատճառով հիշյալ տեսակի դարձգիրը կոչվում է նաև *անհստակ*, *հնչունային* դարձգիր (неточный, звуковой палиндром): Տե՛ս «Палиндром» // Энциклопедия "Кругосвет" (Универсальная научно-популярная энциклопедия) // https://www.krugosvet.ru/enc/gumanitarnye_nauki/lingvistika/PALINDROM.html



Նոր իմաստի կամ ինչպես վերը նշեցինք՝ «հավելադիր մտքի» ստեղծման առումով խնդրո առարկա հնարները համեմատելի են երաժշտության մեջ *հայելանման ֆուգայի* հետ, որտեղ, ըստ էության, առկա է «շրջված, որի արդյունքում ձևավորվում է նոր ֆուգա»[32]՝ *նմանակման* (իմիտացիայի) միջոցով:

Ինչպես լեզվի, այնպես էլ երաժշտության մեջ թաքնադարձգիրը երկու կողմերից ընթերցելիս ստանում ենք տարբեր, սակայն միմյանց փոխլրացնող արժեքներ: Շարույթի վերջը նաև մեկ այլ՝ նոր ասելիքի սկիզբ է: Ինչպես բնական լեզուների, այնպես էլ երաժշտության մեջ թաքնադարձգիր տեսակի շարույթի աջից ձախ և ձախից աջ ընթերցումները կարող են անվերջ հաջորդել մեկը մյուսին: Նմանատիպ օրինակ է Յոհան Սեբաստիան Բախի «Canones diversi super Thema Regium, Canon 1. a 2»[33] ստեղծագործությունը: Նկատենք, որ կոմպոզիտորն իր հեղինակած այս կանոնը անվանել է «անվերջ կանոն»՝ ելնելով դրա կառուցվածքի տրամաբանությունից:

Քննարկվող օրինակների թվում հաճախ մեջբերվում է նաև Յոզեֆ Հայդնի 47-րդ սիմֆոնիայի երկրորդ մասը՝ «Minuetto al Roverso», որը, ի դեպ, հաճախ հենց «Palindrome» էլ կոչվում է.



[32] Տե՛ս «Музыкальный словарь Гроува», перевод с англ. Л. О. Акопяна, М., Практика 2001, էջ 340:

[33] Տե՛ս **J. S. Bach**, *Musikalisches Opfer*, Landshoff L. (Ed. by), Edition Peters, Leiptzig էջ 8:

Ինչպես երևում է, *սոլ* նոտայով սկսվող և սոլով ավարտվող երաժշտական տեքստը երկու կողմից ընթերցելիս ստանում ենք միևնույն արդյունքը: Այնուամենայնիվ, ամբողջի կեսը (առաջին տասը տակտերը) առանձին վերցրած, թաքնադարձգիր է այնքանով, որ այն հնարավոր է ընթերցել թե՛ ձախից աջ և թե՛ աջից ձախ ու ստանալ տրամաբանված երաժշտական ասելիք:

Երաժշտագիտական խոսույթում դարձգրերի, հայելային կառույցների և խեցգետնաքայլ նմանակման թեմաներին բազմաթիվ անդրադարձներ են կատարվել, այդ թվում նաև հայ դասական երաժշտության օրինակների մեջբերմամբ[34]: Ընդ որում, *խեցգետնաքայլ կանոն* ասելիս սովորաբար ուշադրության է առնվում երաժշտական շարույթի համաչափությունը հորիզոնական առանցքում, իսկ *հայելայնության* մասին խոսելիս՝ շարույթի համաչափությունը ուղղաձիգ առանցքում: Երաժշտության մեջ *հայելանման իմիտացիայի* պարագայում, առանցքային դերակատարում ունի մետրոռիթմիկ և մեղեդային ուրվագծի լիակատար պահպանումը՝ այն պայմանով, որ այդ մեղեդային դրսևորումը վերարտադրվի հակառակ ուղղությամբ՝ վերընթացը փոխվի վարընթացով, վարընթացը՝ վերընթացով: Հարց է ծագում, թե յոթ աստիճաններից ո՛ր մեկն է լինելու հայելանման իմիտացիայի առանցքային տոնը՝ *համաչափության առանցքը*: Առանցքային տոնը որոշում է հայելանման իմիտացիայի՝ որևէ տոնայնության մեջ գտնվելը. օրինակ՝ եթե հայելանման իմիտացիան շարադրանքի թելադրանքով անհրաժեշտ է կառուցել նույն տոնայնության մեջ, ապա առանցքային տոն պետք է հանդիսանա միայն երրորդ աստիճանը՝ հիմնական եռահնչյունի տերցիան, օրինակ՝ դո մինորում՝ մի բեմոլը: Այս պարագայում աստիճանները կհավասարեցվեն հակընթաց, և դարձգիրը կստացվի:



Թե՛ լեզվի, թե՛ երաժշտության մեջ տվյալ տեսակի շարույթը ենթադրում է նիշերի որոշակի հաջորդականություն, որտեղ դարձգրի էությունը պարզ է դառնում միայն «կրկնապատկման», այն է՝ երկու ուղղություններով ընթերցվելու պարագայում: Այնուամենայնիվ, ինչպես վերը նշվեց, մեկ ուղղությամբ ընթերցվելիս արդեն իսկ ավարտուն, տրամաբանական «նախադասություն» ենք ստանում: 1-ից մինչև 3 թվային նիշերով ստեղծված խորհրդանիշների մեջ այս տեսակի հա-

[34] Տե՛ս **Դանիել Երաժիշտ**, Պալինդրոմոն – դարձգիր // Հայ արվեստ 3-4, (21-22), 2007, էջ 38-40:

մար կարելի է ընդունել, օրինակ, «213» պայմանական թիվը, որը շրջելիս միավորի սկզբնական արժեքը (լեզվում՝ սկզբնական իմաստը, երաժշտության մեջ՝ սկզբնական հնչյունային արդյունքը) չի պահպանվում (213 ≠ 312)։ Հետադարձ ընթերցման ժամանակ տեղի է ունենում նիշերի վերադասավորություն և միայն կրկնապատկման միջոցով է պարզվում միավորի՝ դարձգիր լինելը (213+312 = 525)։

Ստացվում է, որ լեզվի և երաժշտության նշանային համակարգերում խնդրո առարկա հնարները մեկ ընդհանուր դասակարգման շրջանակներում կարելի է տարբերակել **ձևաիմաստային բաղադրիչի** և **համաչափության առանցքի տեսակի** հիման վրա։



Այս համատեքստում անդրադառնալով համաչափության առանցքի խնդրին՝ հարկ է ընդգծել, որ *առանցքը* կարևոր տարբերակիչ հատկանիշ է դարձգրի՝ վերը առանձնացված երկու տեսակների բնորոշման և տարբերակման համար։ Մեր վերոնշյալ դասակարգման մեջ օգտագործված թվային խորհրդանիշների մեջ առանցքը *դարձգրի* պարագայում ներկայացված է «3» թվանշանով, մինչդեռ *կիսադարձգրի* և *թաքնադարձգրի* պարագաներում՝ x-y առանցքի «0» կետով։ Վերոգրյալի հիման վրա կարելի է ասել, որ *դարձգրի* կառուցվածքում շարույթի առանցքը կենտրոնում է, մինչդեռ *կիսադարձգրի* և *թաքնադարձգրի* պարագայում այն շեղված է դեպի աջ կամ դեպի ձախ՝ կախված շարույթի ընթերցման ուղղությունից (որն իր հերթին պայմանավորված է տվյալ նշանային համակարգի ներակա առանձնահատկություններով)։ Իմաստի ամբողջացումը հնարավոր է միայն այն պարագայում, եթե առանցքը հայտնվի ընթերցման մեջտեղում։

Միաժամանակ հարկ է նկատել, որ առաջարկվող սույն դասակարգման համաձայն՝ թաքնադարձգրերի շարքին չեն կարող դասվել այն նախադասությունները, որոնք իրենց առանցքում չեն հանգում տրամաբանական դադարի։ Թաքնադարձգրի պարագայում միանգամայն հնարավոր է առանցքում վերջակետով ընդհատել շարույթը՝ առանց խաթարելու ասելիքի տրամաբանությունը։ Թաքնադարձգիրն իր առանցքում չունի պայմանական «3»-ով ներկայացված որևէ նիշ։ Այստեղ «O» առանցքը ներկայացնում է խոսքի այն դադարը, որից հետո շարույթի շրջվածքը սկսվում է վերջին նիշի կրկնությամբ։ Բացի այդ, ի տարբերություն *բարդ* համարվող դարձգրերի, որտեղ առանցքը նույնպես անցնում է ոչ թե նիշի վրայով, այլ նիշերի արանքով (այս առումով

քննարկվել է «Я – нем, худ, но | Он – дух меня» օրինակը)[35], մեր սահմանած այս տիպի դարձգիրն առանձնանում է նրանով, որ դրա առաջին մասը ոչ թե կիսադարձգիր է, այլ բացարձակ, ավարտուն միտք, որին իմաստային առումով արձագանքում և լրացնում է երկրորդ՝ հակադարձ ընթերցման արդյունքում ստացվող նախադասությունը:

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ հանգում ենք մի քանի եզրակացության:

ա. Դարձգիրը, որպես երևույթի մեկնության հայելային գործառույթով օժտված կառույց, գաղափարային առումով ներմարմնավորում է սահմանազատումն ***իրականի*** ((1) շոշափելի, նյութական, (2) աշխարհիկ (3) ճշմարիտ, բարի) և ***անիրականի*** ((1) անշոշափելի, ոչ նյութական, (2) անդրաշխարհիկ, տրանսցենդենտալ, (3) սխալ, չար) միջև՝ միևնույն ժամանակ ներկայացնելով վերոնշյալ սահմանի գոյության, ինչպես նաև ժամանակի և տարածության շրջելիության գաղափարը: «Իրական-անիրական» հակադրության միասնությամբ (հայելու օրինակի պարագայում՝ այն ինչ երևում է, միևնույն իրականի ներկայացումն է շրջվածք-արտացոլքով՝ պարզապես դրա *ան-իրական*, *ան-շոշափելի* վերարտադրությամբ) դարձգիրը **բովանդակային առումով չի փոփոխում** առարկայի էությունը, թեև որոշակի առումով լրացնում է այն: Լեզվի, ինչպես նաև երաժշտության մեջ այս երևույթը հատկապես նկատվում է թաքնադարձգիր կառույցների միջոցով:

բ. Լեզվի և երաժշտության նշանային համակարգերի խաչմերուկում հնարավոր է առանձնացնել դյուրադարձուկների երեք հիմնական տեսակ՝ դարձգիր (պալինդրոմ), կիսադարձգիր (անագրամա կամ փոխադրում) և թաքնադարձգիր (կրիպտոպալինդրոմ): Վերջինս յուրահատուկ հայելային կառույց է, որի հետադարձ ընթերցումը ոչ թե կրկնում, այլ **լրացնում է առաջին ուղղությամբ ընթերցվող շարույթի միտքը**: Հետևապես, թաքնադարձգիրը տրամաբանորեն ավարտուն միտք է, որի կառուցվածքում սովորաբար առկա են կիսադարձգիր միավորներ: Ընդորում, թաքնադարձգրի քողարկված էությունը պայմանավորված է նրանով, որ ընթերցողը, հասնելով տրամաբանական հանգուցակետի (լեզվի մեջ՝ վերջակետ, երաժշտության մեջ՝ տակտի գիծ), կարող է արտաքին ձևից ամենևին չկռահել, որ «ասելիքի» ամբողջականության համար անհրաժեշտ է կատարել նաև հետընթաց ընթերցում:

Գ. Եթե սովորական դարձգրի ամբողջական շարույթի առանցքը համընկնում է մտքի տրամաբանական դադարի հետ, ապա առանցքի աջ և ձախ մասերը, առանձին վերցրած, նույնպես թաքնադարձգրեր են (ինչպես, օրինակ, վերը քննարկված *In girum imus nocte* նախադասությունը կամ Յ. Հայդնի *Minuetto al Roverso*-ի առաջին տասը տակտերը):

Հավելենք նաև, որ դարձգրերի ստեղծումը կապված է մի կողմից ուղեղի աջ և ձախ կիսագնդերի հարաբերական ակտիվության, երկու

[35] Տե՛ս «Палиндром» // Энциклопедия "Кругосвет" (Универсальная научно-популярная энциклопедия) // https://www.krugosvet.ru/enc/gumanitarnye_nauki/lingvistika/PALINDROM.html

ուղղություններով գրելու և ընթերցելու կարողության, մյուս կողմից էլ տեքստակազմության համար օգտագործվող նշանային համակարգի ներակա տվյալների և առանձնահատկությունների հետ։

Բանալի բառեր – *դարձգիր, գրաշրջում, համաչափության առանցք, թաքնա-դարձգիր, երաժշտագիտություն, լեզվաբանություն, դարձգրերի դասակարգում*

ГРИГОР КАЗАРЯН – ***Палиндром как проявление зеркальности через знаковые системы языка и музыки.*** – Статья посвящена проблеме зеркальности в знаковых системах языка и музыки. В качестве фундаментальной единицы, стоящей в основе зеркальности как понятия и явления, рассматривается палиндром. Даётся определение палиндрома с учётом соответствующей теоретической базы лингвистики и музыковедения. Предлагается общая классификация палиндромов на основе семантического компонента и оси симметрии. Впервые вводится понятие криптопалиндрома, который является синтагматической структурой, представляющей собой скрытый палиндром, ракоходное обращение которого не повторяет, а дополняет предыдущее высказывание новым смыслом.

Ключевые слова: *палиндром, анаграмма, ось симметрии, криптопалиндром, музыковедение, лингвистика, классификация палиндромов*

GRIGOR GHAZARYAN – ***The Palindrome as a Reflection of Specularity through the Sign Systems of Language and Music.*** **–** The study is devoted to the problem of specularity in the sign systems of language and music. The palindrome is viewed as a fundamental unit of the concept and phenomenon of specularity. The definition of a palindrome is given with due regard to corresponding theoretical bases from Linguistics and Musicology. A general classification of palindromes is proposed on the basis of the semantic component and the axis of symmetry. For the first time, the notion of cryptopalindrome is introduced to define a syntagmatic structure representing a covert palindrome the retrograde movement of which complements the former statement with a new meaning.

Key words: *palindrome, anagram, axis of symmetry, cryptopalindrome, musicology, linguistics, classification of palindromes*

Ներկայացվել է՝ 14.05.2019
Գրախոսվել է՝ 10.09.2019
Ընդունվել է տպագրության՝ 28.11.2019